ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/35

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրության հիման վրա, 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ռալֆի» ՍՊԸ- ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 03.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/14096-17 գրությամբ դիմել է «Ռալֆի» ՍՊԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրության հիման վրա, 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն «Ռալֆի» ՍՊԸ-ն Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.08.2017թ. ժամը 11:00-ի և 11.08.2017թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ը 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրությամբ ներկայացրել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ռալֆի» ՍՊԸ-ն 05.07.2017թ. ներկայացրել է հայտ: Այնուհետև, ճանաչվելով առաջին տեղ զբաղեցնող մասնակից, Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին, սակայն սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Բացի այդ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Ռալֆի» ՍՊԸ-ն ունի 1 251 086 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.08.2017թ. ժամը 11:00-ի և 11.08.2017թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/35 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/35 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսանկարչական և օժանդակ ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1-9-րդ չափաբաժինների մասով, հայտ է ներկայացրել «Ռալֆի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնային առաջարկ է ներկայացրել միայն «Ռալֆի» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ռալֆի» ՍՊԸ-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ սահմանված ժամկետում Ընկերությունը չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Նույն արձանագրության 1.2 կետով արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչությունից ստացված եզրակացության համաձայն՝ «Ռալֆի» ՍՊԸ-ն ունի 1 251 086 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

5. Նույն արձանագրության 2.1 կետով արձանագրվել է, որ հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

6. Պատվիրատուն 06.07.2017թ. թիվ 190/2-2017 ծանուցմամբ «Ռալֆի» ՍՊԸ-ին հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից Ընթացակարգի 1-9-րդ չափաբաժինների մասով և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնել Ընկերության կողմից հաստատված՝ հայտով առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրերը:

7. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 03.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/14096-17 գրությամբ դիմել է «Ռալֆի» ՍՊԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրության հիման վրա, 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն վերջինս Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական

կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ***Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: ***Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար լուսանկարչական և օժանդակ ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով՝ Ընթացակարգի թիվ 1-9-րդ չափաբաժինների մասով, հայտ է ներկայացրել «Ռալֆի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ հաշվի առնելով

այն հանգամանքը, որ գնային առաջարկ է ներկայացրել միայն «Ռալֆի» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ռալֆի» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ ***սահմանված ժամկետում Ընկերությունը չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

Նույն արձանագրության 1.2 կետով արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՏՏ վարչությունից ստացված եզրակացության համաձայն՝ «Ռալֆի» ՍՊԸ-ն ունի 1 251 086 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Նույն արձանագրության 2.1 կետով արձանագրվել է, որ հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ չկայացած հայտարարել «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Պատվիրատուն 06.07.2017թ. թիվ 190/2-2017 ծանուցմամբ «Ռալֆի» ՍՊԸ-ին հայտնել է, որ վերջինս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ Ընթացակարգի 1-9-րդ չափաբաժինների մասով, և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնել Ընկերության կողմից հաստատված՝ հայտով առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրերը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 03.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/14096-17 գրությամբ դիմել է «Ռալֆի» ՍՊԸ-ին և վերջինիս տեղեկացրել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.07.2017թ. թիվ 201/2-2017 գրության հիման վրա, 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

պաշտոնական ընթացակարգ և խնդրել է ներկայացնել գրավոր կարծիք, սակայն ***«Ռալֆի» ՍՊԸ-ն Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը***, ինչպես նաև պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 08.08.2017թ. ժամը 11:00-ի և 11.08.2017թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ռալֆի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, արձանագրում է, որ «Ռալֆի» ՍՊԸ-ն՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ***06.07.2017թ.*** ստացված ծանուցմանն ի պատասխան՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին չի ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ռալֆի» ՍՊԸ-ն «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-26/06-2017» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ սահմանված ժամկետում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է այն փաստական հանգամանքին, որ «Ռալֆի» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 1 251 086 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, ապա Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ այն անձին գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմք չի հանդիսանում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

ՀՀ ֆինանսների նախարարության 02.08.2017թ. թիվ 03/27-1/14051-17 գրությամբ «Ռալֆի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03539416) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Ռալֆի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ